1:10000-ից փոքր մասշտաբով	1,0	0,5
1:10000 և ավելի խոշոր մասշտաբով	1,0	0,25
Տարբեր նշանակության հետազոտական և հետախուզական հիդրոերկրաբանական հորատանցքեր, ստորգետնյա ջրերի ելքի կետեր, հորատանցքեր	1,5	0,5
Կառուցապատված տարածքում հիդրոերկրաբանական հորերի ռեժիմային ցանց	0,5	0,05
Ջրաչափական կետերի գրունտային հենանիերը	0,5	$0,02 \sqrt{L}$
Ինժեներաերկրաբանական աշխատանքներ և ջրային տարածքների, գետերի և ջրամբարների վրա կետեր	1,5	-
Ստացիոնար դիտարկումների, նմուշառման և նմուշների հավաքման կետեր	1,0	0,1
Նշանակում՝		

«Լ» – նիվելիրացման ընթացքի երկարությունը, կմ:

Ծանոթություններ.

1 Քաղաքային բնակավայրերի կառուցապատված տարածքներում աշխատանքների (կետերի) դիրքը պետք է որոշվի կապիտալ շենքերի անկյունների չափման ժամանակ ընդունված ճշտությամբ:

2 Հիդրոերկրաբանական հորատանցքերի փորձարարական կլաստերների համար ծրագրում պետք է սահմանվեն կլաստերում հորատանցքերի հարաբերական դիրքը որոշելու միջին սխալները, ինչպես նաև ջրային տարածքների, գետերի և ջրամբարների վրա կետերի բարձունքային կապակցման միջին սխալները:

144. Ինժեներաերկրաբանական աշխատանքների և դիտարկման կետերի պլանային և բարձունքային կապակցման աշխատանքների արդյունքում տեխնիկական հաշվետվության մեջ պետք է ներկայացվեն հետևյալը՝
- նժեներաերկրաբանական աշխատանքների (դիտարկման կետերի) տեղանքի իրադրության սխեման,
- նժեներատեղագրական փորվածքների պատճեններ՝ փորվածքների (դիտարկման կետերի) տեղադրմամբ,
- նժեներաերկրաբանական փորվածքների կոորդինատների և բարձրությունների կատալոգ,
- երկրաբանական և այլ դիտարկման կետերի կոորդինատների և բարձրությունների կատալոգ (համաձայն առաջադրանքի լրացուցիչ պահանջի):

5.4 Գծային օբյեկտների ուղեգծում

145. Նախագծված գծային կապիտալ շինարարության նախագծի ուղեգծումը որպես ինժեներագեոդեզիական հետազննությունների մաս իրականացվում է գծային կառույցի ուղեգծը տեղանքում որոշելու նպատակով և ներառում է երկու փուլ՝ գրասենյակային և դաշտային ուղեգծում: Փուլերի բովանդակությունը որոշվում է նախագծվող օբյեկտի առանձնահատկություններով և պատասխանատվության մակարդակով:

146. Գրասենյակային ուղեգծման փուլում հավաքագրվում են քարտեզագրական նյութեր, աերո և տիեզերական նկարներ և անցած տարիների ինժեներական հետազննությունների արդյունքները՝ նախագծվող օբյեկտի հնարավոր տեղակայման հիմնական և այլընտրանքային տարբերակների համար, ինչպես նաև տեղագրական քարտեզների կամ ինժեներատեղագրական հատակագծերի վրա ուղեգծի տարբերակների գրասենյակային մշակում:

147. Գծային օբյեկտների հնարավոր տեղակայման տարածքների վերաբերյալ քարտեզագրական նյութերի հավաքագրման ընթացքում պետք է ձեռք բերվեն հետևյալը՝
մասշտաբների տեղագրական քարտեզներ,
րկրի հեռահար զոնդավորման տվյալներ, ներառյալ աերո և տիեզերական նկարներ, օրթոֆոտոհատակագծեր,
ողաշինարարական, անտառաշինական քարտեզներ և հատակագծեր,
ախորդ տարիների ինժեներական հետազննությունների նյութեր:

148. Նախագծվող գծային օբյեկտի ուղեգծի տարբերակների գրասենյակային նախագծում պետք է ներառի.

մասշտաբների իրադրությունների քարտեզների ստեղծում (կախված ուղեգծի երկարությունից), որոնց վրա նշված կլինեն հատուկ պահպանվող տարածքների, բնության պահպանության տարածքների և այլ օգտագործման հատուկ ռեժիմ ունեցող տարածքների, հողօգտագործողների և սեփականատերերի, համայնքների և Հայաստանի Հանրապետության մարզերի սահմանները համաձայն Հողային օրենսգիրքի պահանջների, ընդհանուր տարբերակների նախնական ընտրություն և դրանց հիմնավորում, արտեզների վրա ուղեգծի տարբերակների անցկացում՝ հաշվի առնելով նախագծված գծային օբյեկտի առանձնահատկությունները և ապահովելով նախագծված օբյեկտի տեղադրման ստանդարտներին համապատասխանությունը (թույլատրելի թեքություններ, կորի շառավիղներ, գծային կառույցների միջև թույլատրելի հեռավորություններ, կոմունալ գծերի հատման անկյուններ, կառուցապատված տարածքներից և այլ օբյեկտներից հեռավորություններ, անվտանգության գոտիների չափսեր և այլն):

149. Դաշտային ուղեգծումը, որպես կանոն, ներառում է հետևյալ տեսակի աշխատանքները՝
ուղեգծի հատվածի հետազոտական հետազննություն,

և 5.2 ենթաբաժինների համաձայն՝ հիմնային գեոդեզիական ցանցի կամ հատուկ նշանակության գեոդեզիական ցանցի ստեղծում,

ենթաբաժնի կետերի համաձայն՝ հանութային գեոդեզիական ցանցի ստեղծում,

ամաձայնեցված ուղեգծի նշագրում և ամրացում (ընտրված ուղեգծի տարբերակներ, եթե դա նախատեսված է առաջադրանքով),

ուղեգծի երկայնքով անտառների հատման քանակական բնութագրերի որոշում, եթե դա նախատեսված է առաջադրանքով,

ծային կառուցվածքի առանցքի երկայնքով սահմանված տեղանքի շերտի ինժեներատեղագրական հատակագծերի ստեղծում (թարմացում, եթե դա նախատեսված է առաջադրանքով):

150. Կախված առաջադրանքի պահանջներից, նախագծված գծային օբյեկտի ուղեգծի նախագծված տարածքում ամրացվում են նշաններով (ժամանակավոր կամ երկարաժամկետ ամրացնող կետեր), որոնք տեղադրվում են՝

ուղեգծի սկզբի, վերջի և հատման կետերում, շրջադարձային անկյունների գագաթներում, խոչընդոտների վրայով անցումների հատվածներում, ինչպես նաև հարակից կետերի միջև տեսադաշտի սահմաններում գտնվող ուղիղ հատվածներում,

ուղեգծի առանցքից դուրս՝ դրա անմիջական մոտակայքում (շինարարական աշխատանքների գոտուց և ճանապարհներից դուրս):

Ամրացվող նշանների նախագծումը և դրանց տեղադրման սխեման հիմնավորվում են ծրագրում՝ համաձայն առաջադրանքի և կարգավորող փաստաթղթերի պահանջների:

151. Մեկ միջանցքում գծային օբյեկտների մի քանի ուղեգծեր նախագծելիս դրանք գետնին ամրացնելու կարգը պետք է սահմանվի առաջադրանքում կամ ծրագրում:

Ընդհանուր դեպքում, եթե զուգահեռ ուղեգծերի միջև հեռավորությունը 50 մ-ից ոչ ավելի է, ուղեգծերից մեկը ենթակա է տեղանքում գետնին ամրացման:

152. Առաջադրանքի լրացուցիչ պահանջի համաձայն, ուղեգծի առանցքի երկայնքով նշահարվում և ամրացվում են ուղեգծի և պլյուսային կետերը, շրջանային կորերի տարրերը, ինչպես նաև կատարվում է երկայնական և լայնակի պրոֆիլների չափագրում:

153. Գծային օբյեկտի ուղեգծի ոչ կառուցապատված տարածքներում կարելի է չամրացվել կետերը, եթե դա նախատեսված է առաջադրանքով: Այս դեպքում իրականացվում է տեղանքի սահմանված շերտի տեղագրական հանութագրում նախատեսված ուղեգծի

տարբերակի երկայնքով, որին հաջորդում է ուղեգծի գրասենյակային ուղեգծումը: Ուղեգծի բնորոշ կետերը (սկիզբ, վերջ, շրջադարձի անկյուններ) գրասենյակային ուղեգծով կապակցվում են հանութային հիմնավորման հիմնակետերի հետ:

154. Ուղեգծի ամրացման նշանների պլանային և բարձունքային դիրքերը որոշվում է հանութային գեոդեզիական ցանցի հիմնակետերի համար օգտագործված մեթոդներով (5.3.1 ենթաբաժին):

Ամրացված նշանների պլանային և բարձունքային դիրքերի որոշման պահանջվող ճշտությունը սահմանվում է 56 և 60 կետերի համաձայն: Միջանկյալ և պլյուսային կետերի, պրոֆիլների և շրջանային կորերի վրա կետերի պլանաբարձունքային դիրքի որոշման ճշտությունն ընդունվում է ստեղծված ԻՀՑ-ի հատվածի մասշտաբին և ռելիեֆի անկման կտրվածքին համապատասխան՝ համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 29.07.2022 թ. N 17-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 13.01-2022-ի պահանջների:

155. Կառուցապատված տարածքներում ամրացման նշաններ չպետք է տեղադրվեն:

Ուղեգծի սկզբնական և վերջնական կետերը (եթե դրանք ամրացված չեն գետնին), շրջադարձի անկյունների գագաթները և ուղիղ հատվածների վրա ծածկագծի կետերը պետք է երեք գծային չափումներով կապված լինեն տեղանքի մշտական օբյեկտների կամ առարկաների հետ (շենքերի, կառույցների անկյուններ և այլն) և պետք է կազմվեն կապակցման կապերի ուրվագծեր:

156. Գծային օբյեկտի ուղեգծի երկայնքով պետք է տեղադրվեն նիվելիրացման հիմնակետեր (հենանիշեր):

Նշանները պետք է տեղադրվեն այնպիսի տեղերում, որոնք ապահովում են դրանց անվտանգությունը և դիտարկման հեշտությունը, նախագծված գծային օբյեկտի առանցքից առնվազն 50 մ հեռավորության վրա:

Գրունտային հենանիշերի տեսակները և դրանց տեղադրման կանոնները տրված են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 19.07.2002թ. N 39-Վ հրամանով հաստատված «Գեոդեզիական կետերի կենտրոնների և արտաքին մետաղական նշանների ՀՍՏ 226-2002»-ում: Որպես հենանիշեր թույլատրվում է օգտագործել տեղանքում երկարաժամկետ և մշտական ամրացման առկա գեոդեզիական և նիվելիրացման հիմնակետերը, օդային էլեկտրահաղորդման գծերի հենարանների տարրերը, ստորգետնյա

հաղորդակցությունների դիտահորերը, ինչպես նաև պատերի, սյուների, հիմքերի, տարբեր ինժեներական կառույցների ելուստների վրա տեղադրված նշանները (հենանիշերը):

157. Հենանիշերի բարձրությունները որոշվում են ելային պետական բարձունքային նիվելիրացման հենանիշերի և դրոշմանշերի, պետական գեոդեզիական ցանցի հիմնակետերի կամ ՀԳՑ-ի հենանիշերի նկատմամբ՝ IV դասի նիվելիրացման ճշտությամբ (տե՛ս աղյուսակ 3):

158. Եթե հենանիշերը չեն կապակցվում նախատեսված ՀԳՑ-ում, GSSN-ում կամ հանութային գեոդեզիական ցանցում, դրանք կապակցվում են ուղեգծի համար տեղադրված նշաններին, տեղական առարկաներին կամ բնութագրական եզրագծերի հետ՝ այնպիսի ճշտությամբ, որը ապահովում է ստեղծված ԻՏՀ-ի վրա օբյեկտների անցկացման պահանջների պահպանումը համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 29.07.2022 թ. N 17-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 13.01-2022-ի պահանջների:

Բոլոր հենանիշերի համար կազմվում են ուրվագծեր: Հենանիշերի տեղադրման պահանջները ներկայացված են աղյուսակ 9-ում:

159. Հենանիշերը ՀԳՑ, GSSN կամ հանութային գեոդեզիական ցանցում ներառելիս դրանց պլանային դիրքը որոշվում է համապատասխանաբար 5.1, 5.2 և 5.3 ենթաբաժնի կետերի համաձայն: Գծային օբյեկտների ինժեներագեոդեզիական հետազննումների ժամանակ գեոդեզիական ցանցի կետերը, որպես կանոն, ամրացվում են զույգերով տեսադաշտի սահմաններում՝ համաձայն ինժեներագեոդեզիական հետազննության ծրագրի:

Աղյուսակ 9

Գծային օբյեկտի երկանքով հենանիշերի տեղադրման պահանջները

Ամրացված օբյեկտի անվանումը	Հենանիշերի միջև եղած հեռավորությունը, կմ	Հենանիշերի քանակը	Ծանոթություն
1	2	3	4
Մայրուղային խողովակաշարեր			
Ուղեգիծ	5	2-ից ոչ պակաս	Ուղեգծի սկզբում և վերջում; միացման

			հատվածներում, յուրաքանչյուր 5 կմ մեկ
Միագիծ ուղեգծի անցումը գետի միմջև 30 մ լայնության		1	
Միագիծ ուղեգծի անցումը գետի 30 մ- ից ավելի լայնության		2	Մեկական յուրաքանչյուր ափին
Երկգիծ ուղեգծի անցումը գետի 30 մ- ից ավելի լայնության		4	Երկուական յուրաքանչյուր ափին
Երթուղին անցնում է ծորերով և զառիթափներով		1	Ափից 50 մետրից ոչ մոտիկ, հավանական քայքայման գոտուց դուրս
Անցումը երկաթուղային ճանապարհներով		1	Մականջում ռելսի գլխին
Ուղեգծի երկայքով օբյեկտի մակերես- ների չափերը			
Մինչև 1 հա		1	
1 հա-ից մինչև 5 հա		1	
5հա-ից մինչև 10 հա		2	
Ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհներ			
Ուղեգիծ	2	2-ից ոչ պակաս	Ուղեգծի սկզբում և վերջում, միացման հատվածներում,

			յուրաքանչյուր 2 կմ մեկ
Ամրացված օբյեկտի անվանումը	Հենանիշերի միջև եղած հեռավորությունը	Հենանիշերի քանակը	Ծանոթություն
Կամուրջային անցումները գետերի վրայով		2	Մեկական յուրաքանչյուր ափին
Գծային կառույցների հատումներ		1	
Ուղեգծով հարթակներ		1	
Մայրուղային ջրանցքներ			
Ուղեգիծ		2	Ուղեգծի սկզբում և վերջում, յուրաքանչյուր 2 կմ մեկ

160. Ուղեգծի հարակից հատվածների միացումը, որոնց վրա աշխատանքները կատարվել են տարբեր կապալառուների կողմից, որպես կանոն, իրականացվում է ուղեգիծը կառուցող կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ (դաշտային խմբեր, եթե աշխատանքը կատարվել է մեկ կազմակերպության կողմից): Ուղեգծի միացման ժամանակ աշխատանքների կազմի պահանջները և միացման ակտի ձևը սահմանվում են ծրագրում:
161. Հարակից հատվածների միացման ակտը պետք է պարունակի գծի միացման երկու կողմերում տեղակայված նշանների կոորդինատների և բարձրությունների ստուգողական չափումների արդյունքներով, հատվածի վրա իրադրության, ռելիեֆի, շենքերի և կառույցների (ներառյալ ենթակառուցվածքային գծերի) տեղադրման անհամապատասխանությունների վերաբերյալ տվյալներ, հարակից ինժեներատեղագրական հատակագծերի ամփոփագրեր և ստացված արժեքների գնահատում:

162. Գծային օբյեկտի ուղեգծման առաջադրանքը, 11 կետից բացի, պետք է պարունակի հետևյալ նյութերն ու տվյալները.

ախագծված գծային օբյեկտի տեղանքի իրադրության (ընդհանուր) դիագրամ՝ սխեման, եղեկատվություն ուղեգծի սկզբնական և վերջնական կետերի վերաբերյալ, վյալներ գծային օբյեկտի ուղեգծի երկայնքով լայնակի գոտու տեղագրական հանույթի նախագծված ուղեգծի հատումներում, խոչընդոտների վրայով և առկա օբյեկտների հետ հանգույցներում հանութագրված տարածքների չափերի, ինչպես նաև ստեղծված ԻՏՀ-ի մասշտաբի վերաբերյալ,

ետազննվող գծային օբյեկտի և դրա ենթակառուցվածքային կառույցներում (եթե կան) տեղանքում ամրացման պահանջները:

163. Գծային օբյեկտների ուղեգծման ընթացքում ինժեներագեոդեզիական հետազննությունների կատարման ծրագիրը, բացի 12 կետից, պետք է պարունակի.

ծային օբյեկտի (դաշտային և գրասենյակային) ուղեգծման աշխատանքների տեսակների և ծավալների հիմնավորում՝ աշխատանքային տարածքի իրական տեղագրագեոդեզիական ծածկույթին համապատասխան, արբեր կապալառուների կողմից հետազննված ուղեգծի հատվածների միացման ընթացքում աշխատանքների կազմը, ուղեգծի հատվածների միացման ակտի ձևը:

164. Գծային օբյեկտի ուղեգծի աշխատանքների կատարման ընթացքում ինժեներագեոդեզիական հետազննությունների տեխնիկական հաշվետվությունը, բացի 26 կետից, պետք է ներառի.

ախագծված ուղեգծի (դրա տարբերակների) անցման իրադրության պլանը, ախագծված ուղեգծի անցման երկայնական և (առաջադրանքի լրացուցիչ պահանջի դեպքում) տեղանքի լայնակի պրոֆիլները, ենանիշների տեղադրման և ուղեգծի առանցքին ամրացված նշանների և դրանց կապերի սխեման, ըջադարձի անկյունների, ուղիղ գծերի և կորերի (ուղիղ գծեր և անկյուններ) նշումները, ամրացման նշանների և հենանիշերի կոորդինատները, ուղեգծի երկայնքով տեխնիկական ցուցանիշների տեղեկագրերը, ատվող հողատեսքերի և անտառների, ջրային հոսանքների, մայրուղիների և

երկաթուղիների, վերգետնյա և ստորգետնյա կառույցների, ճահճային և թեք լանջերով տարածքների նշումների տեղեկագրերը,
լղաձիգ և հորիզոնական կորերի նշահարման նշումների կամ կետերի (առաջադրանքի լրացուցիչ պահանջի դեպքում) տեղեկագրերը,
լեգծի հատվածների միացման ակտերը,
ատվիրատուին տեղադրված հիմնակետերի, նշանների և հենանիշերի հանձնման ակտը:

5.5 Ինժեներական և հիդրոգրաֆիական աշխատանքներ

165. Գետերի (ջրահոսքերի), լճերի, ջրամբարների վրա ինժեներական և հիդրոգրաֆիական աշխատանքների շրջանակներում, կախված ինժեներական հետազննությունների նպատակներից, կատարվում են հետևյալը.
- ահանջվող ճշտության պլանային և բարձրունքային գեոդեզիական հիմքի ստեղծում անհրաժեշտ խտությամբ և դրանց տեղադրումը,
փամերձ ցամաքային տարածքների ԻՏՀ-ի ստեղծում (թարմացում),
ունի հանութագրում,
որության չափումներ (ներառյալ դրանց բարձրունքային ապահովումը),
րի ակնթարթային և մեկօրյա մակարդակների կապեր,
րագրական տրալ,
տորջրյա խոչընդոտների հետազննություն,
եռնափոխադրումների երթուղիների ընթացքի և ծածկագծային հարթակների հանութագրում,
ատուկ հիդրոգրաֆիական աշխատանքներ, հիդրոլոգիական և ինժեներա-երկրաբանական աշխատանքների ապահովման համար:
166. Հիմնային և հանութային գեոդեզիական ցանցերի կառուցման, ինժեներատեղագրական հատակագծերի ստեղծման (թարմացման) կանոնները տրված են 5.1, 5.2 և 5.3 ենթաբաժիններում:
167. Գետում ջրի մակարդակների ակնթարթային և մեկօրյա կապեր ստեղծելիս բարձրունքային հիմնային գեոդեզիական ցանցը ստեղծվում է III և IV դասերի նիվելիրացման ընթացքներով

ամրացնելով երկարաժամկետ կամ մշտական հիմնակետերով առնվազն յուրաքանչյուր 5 կմ մեկ, եթե առաջադրանքով կամ ծրագրով այլ բան նախատեսված չէ: Նիվելիրացման ճշտության դաս ստեղծվում է համաձայն աղյուսակ 10-ի:

168. Բարձունքային հիմնային ցանց ստեղծելիս, որպես կանոն, օգտագործվում են ավելի բարձր դասերի ելային հենանիշեր: Աշխատանքային տարածքում պետական նիվելիրացման ցանցի հենանիշերի բացակայության դեպքում ստեղծվում է անկախ ցանց՝ պարտադիր կապ ստեղծելով մոտակա հիդրոգրաֆիական կայանին, որի բարձրությունը ընդունվում է որպես ելային:

Աղյուսակ 10

Ինժեներահիդրոգրաֆիական աշխատանքներում բարձունքային հիմնային գեոդեզիական ցանցի դասը

Նիվելիրացման դասը	Ջրի մակերևույթի թեքություն	Ծանոթություն
III	Սկսած 0,00002 մինչև 0,00006	Գետի 1 կմ-ում 2-ից մինչև 6 սմ
IV	0,00006 բարձր	Գետի 1 կմ-ում 6 սմ ավել
Տեխնիկական նիվելիրացում	-	Լճերի և ջրամբարների վրա
Ծանոթություն - Բարդ ֆիզիկական և աշխարհագրական պայմաններում աշխատանք կատարելիս թույլատրվում է իջեցնել նիվելիրացման դասը կամ աշխատանքները կատարել արբանյակային մեթոդներով, եթե դա նշված է առաջադրանքում կամ հիմնավորված է ծրագրում:		

169. Հունային հանույթը ներառում է առափնյա գոտու և ներհունային գոյացությունների տեղագրական հետազննություն, խորության չափումներ և մեկօրյա մակարդակի կապակցումը ցամաքային հատվածի վերգետնյա հանութների իրականացման պահանջներին համապատասխան: Հունի հանութագրման ընթացքում հունային գոյացությունները (կղզիներ, կողային հոսքեր, հատակագծերի վրա ենթակա են

ցուցադրման միջնամասերը և ջրի մակերևույթից վեր դուրս ցցված ռելիեֆային այլ տարրեր, ստորջրյա ռելիեֆը), վտակները, առուները, ողողման ենթարկված ափերի և ձորերի տարածքները:

170. Հունի հանութագրման ժամանակ ծրագրում սահմանվում է ափամերձ գոտու լայնությունը՝ ելնելով հետազննության նպատակից, ինչպես նաև կախված տեղանքի ստույգ գտնվելու պայմաններից: 1:10000, 1:5000, 1:2000, 1:1000 և 1:500 մասշտաբների դեպքում առափնյա շերտի լայնությունը, որպես կանոն, կազմվում են յուրաքանչյուր ափից (հունի եզրագծից) համապատասխանաբար 200 մ, 150 մ, 100 մ, 50 մ և 20 մ:

171. Ժայռոտ զառիթափ ափերը կամ ափերի լանջերը հանութագրելիս, որոնց բարձրությունը զգալիորեն գերազանցում է հեղեղի ամենաբարձր մակարդակի նիշը, հետազոտման գոտու լայնությունը պետք է սահմանափակվի սելավի ամենաբարձր մակարդակի նիշից 2-3 մ բարձրության վրա գտնվող լանջի դիրքով:

Այդ սահմաններից դուրս ափերը պետք է պատկերվեն առանձին բնութագրա-կան կետերի բարձրությամբ:

172. Ջրի հորիզոնի գծի հանութագրման գործընթացում անհրաժեշտ է համակարգված որոշել ջրի մակարդակի բարձունքային նիշերը: Տեղագրական հատակագծերում ջրի հորիզոնի բարձունքային նիշերը պետք է գրվեն յուրաքանչյուր 15-20 սմ-ը մեկ:

173. Խորության չափումները պետք է կատարվեն միմյանցից որոշակի հեռավորության վրա գտնվող հալսերի (չափագրման ծածկագծերի) երկայնքով: Հալսերի ուղղությունները ծրագրում սահմանվում են ջրային օբյեկտի խորության բաշխվածության բնույթին համապատասխան և կախված առաջադրված խնդիրներից: Ստուգողական չափումների համար կատարվում են հիմնական հալսերի երկայնքում գտնվող 30°–150° անկյան տակ հատող կետերում:

174. Ինժեներատեղագրական հատակագծերի ստորջրյա ռելիեֆը պատկերվում են հորիզոնականներով: Հատակի ռելիեֆի հատվածի հորիզոնականների անկումը, կախված չափումների մանրամասնությունից, ստեղծվող հատակագծի մասշտաբից և ռելիեֆի բարդությունից, անցկացվում է 0,5 կամ 1 մ կտրվածքով:

175. Առաջադրանքի պահանջներով (այն դեպքերում, երբ իրականացվում են ինժեներական հետազննություններ՝ ուղղակիորեն կապված ջրային տարածքների շահագործման հետ կապված միջոցառումների նախագծման համար և այլն), հատակագծերը կազմվում են

իզդրաթներով և խորություններով, որոնց քարտեզագրական պատկերների համապատասխանությունն ընդունված են նավիգացիոն քարտեզների համար:

176. Խորության չափումների ժամանակ հալսերի տեղադրման եղանակը (ափամերձ ծածկագծերի, ֆոտոհալսերի, նավիգացիոն գործիքների, ճոճանակի և այլնի միջոցով) պետք է հիմնավորվի ծրագրում:

177. Խորությունների չափման մանրամասնությունները բաժանվում են ստացիոնար, մանրամասն և պարզեցված: Չափման յուրաքանչյուր տեսակ բնութագրվում է հալսերի հաճախականությամբ և դրանց վրա չափված խորություններից, ինչպես նաև հատակագծի մասշտաբները: Հալսերի և չափագրման կետերի միջև հեռավորությունը և հատակագծի կազմման մասշտաբը պետք է համապատասխանեն աղյուսակ 11-ի պահանջներին:

Աղյուսակ 11

Հալսերի և չափագրման կետերի միջև հեռավորությունը և հատակագծի կազմման մասշտաբը

Խորությունների չափման մանրամասնությունը	Հատակագծի մասշտաբը	Հեռավորությունը, մ			
		հատակի ռելիեֆը հալսերի միջև		հատակի ռելիեֆը չափվող կետերի միջև	
		բարդ	հանգիստ	բարդ	հանգիստ
1	2	3	4	5	6
Հատուկ	1:500	5	10	2	2
	1:1000	10	20	5	10
Մանրամասն	1:2000	20	40	10	20
	1:5000	50	100	20	30
	1:10000	100	200	30	40
Թեթև	1:2000	40	60	10	20
	1:5000	100	150	20	30
	1:10000	200	300	30	40

178. Ինժեներահիդրոգրաֆիական աշխատանքների ընթացքում խորությունների չափման կետերի դիրքի որոշման եղանակը պետք է սահմանվի ծրագրում: Կախված ինժեներական հետազննությունների նպատակներից և խնդիրներից, ինչպես նաև աշխատանքային տարածքի բնութագրերից, խորությունների չափման կետերի դիրքը պետք է որոշվի:

օգտագործելով գեոդեզիական արբանյակային որոշումներ,

եղանքում նշահարված չափումների ծածկագծերով,

ործիքային հատումներով,

ռանց գործիքային հատումների:

Որպես խորության չափումներ կատարելու հիմնական մեթոդ, խորհուրդ է տրվում օգտագործել խորության չափումներ՝ օգտագործելով գեոդեզիական արբանյակային համակարգեր և ավտոմատացված հիդրոգրաֆիական համալիրներ:

180. Չափման կետերի ուղղակի նշահարման մեթոդով խորության չափումները ներառում են չափումներ նշված ձգալարի երկայնքով և չափումներ սառույցից:

181. Գործիքային կտրվածքներով խորությունները չափելիս չափման կետերի պլանային դիրքը որոշվում է էլեկտրոնային տախոմետրի միջոցով՝ հանութային գեոդեզիական հիմանկետերի նկատմամբ:

182. Երբ խորության չափումներ են կատարվում առանց գործիքային հատումների, չափված խորությունները բաշխվում են հատակագծի վրա՝ հիմնվելով այն պայմանի վրա, որ չափման ընթացքում ջրային տրանսպորտային միջոցի շարժումը միատարր է եղել: Այս տեսակի չափումները կարող են օգտագործվել փոքր գետերի և փակ ջրհավաքների վրա, եթե կա ֆոտոհատակագիծ կամ տեղագրական հատակագիծ, չափման հատվածների երկարությունը հատակագծի մասշտաբով չպետք է գերազանցի 4 սմ-ը, բայց տեղանքում՝ ոչ ավելի, քան 200 մ մեկ:

183. Ջրային օբյեկտների ինժեներահիդրոգրաֆիական աշխատանքների ընթացքում չափման կետերի պլանային դիրքի որոշման միջին սխալը չափման մոտակա հանութային հիմնակետերի նկատմամբ ընդունվում է համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 29.07.2022 թ. N 17-Ն հրամանով հաստատված ՀՀՀՆ 13.01-2022-ի պահանջների, եթե առաջադրանքով այլ բան նախատեսված չէ:

184. Խորության չափումները կատարվում են էխոլոտերի, սոնարների, պրոֆիլավորիչների, ձեռքով մեխանիկական մեթոդների (նշում, ձեռքով և մեխանիկական զոնդավորման գծեր,

ջրաչափական չափաձող և այլն) միջոցով, օպտիկական և արբանյակային գեոդեզիական գործիքների միջոցով (եթե ջրային ծածկույթի խորությունը թույլ է տալիս): Խորության չափումները կատարվում են առնվազն $\pm 0,1$ մ ճշտությամբ՝ մինչև 10 մ խորություններում, $\pm 0,2$ մ՝ 10-ից մինչև 20 մ խորություններում և $\pm 0,5$ մ՝ 20 մ-ից ավելի խորություններում: Բազմառագայթային էխոլոտեր օգտագործելիս, հալսերի չափման կետերի դասավորությունը, աշխատանքի մանրամասնության և ճշտության պահանջներն ընդունվում են նշված էխոլոտերի տվյալների հավաքագրման և մշակման սարքերի և ծրագրերի շահագործման ձեռնարկներից:

185. Ջրային օբյեկտների հատվածներում, չափումների բարձունքային ապահովվածությունը, որոնց հատակագծերը կազմվում են հորիզոնականներով, կայանում է գետի աշխատանքային ջրի մակարդակի նիվելիրացման մեջ՝ խորության չափումներ կատարելու գործընթացում: Նույն ընթացակարգը (հորիզոնականներով և իզոբատներով հատակագծերի համար) կիրառվում է ծովերի, շելֆի տարածքների, լճերի և ջրամբարների ստորին գոտիների ափամերձ գոտու համար, որտեղ ջրի մակերևույթի մակարդակը հորիզոնական է: Իզոբատներով հատակագիծ կազմելիս հանության աշխատանքների բարձունքային ապահովումը բաղկացած է գետի ջրի մակարդակների ակնթարթային կամ մեկօրյա կապի ստեղծումից՝ խորության չափումների համար զրոյական ընդունված սահմանային մակարդակի մակերեսը որոշելու համար:

186. Խորության չափումների բարձունքային ապահովվածության աշխատանքները ներառում են՝

ամանակավոր ջրաչափական կետերի տեղադրում և ջրի մակարդակի դիտարկում,
րի մակարդակի ակնթարթային կամ մեկօրյա կապակցում,
րի աշխատանքային հորիզոններով նիվելիրացում:

Էլեկտրոնային տախտմետրի կամ ավտոմատացված հիդրոգրաֆիական համալիրների (արբանյակային որոշումների միջոցով) միջոցով գեոդեզիական հանության հիմքի հիմնակետերի նկատմամբ չափման կետերի պլանաբարձունքային դիրքի որոշմամբ չափումներ կատարելիս աշխատանքների ամբողջությունը (չափումների հետ միասին) ներառում է հանության գեոդեզիական ցանցի զարգացում:

187. Նախագծված հիդրոտեխնիկական կառուցվածքների ծածկագծերում տեղադրվում են ժամանակավոր ջրի մակարդակի չափիչ կայաններ: Գետերի երկար հատվածներում

խորության չափումներ կատարելիս չափիչ կայանները տեղադրվում են ջրի մակերևույթի երկայնական պրոֆիլի կտրվածքներում.

րանցքի կտրուկ լայնացման կամ նեղացման հատվածներում,
ոչոր վտակների ներհոսքից առաջ և հետո,
սահմանափակող հոսքերի վրա:

Խորության չափումների ժամանակ, եթե 1 ժամվա ընթացքում մակարդակի փոփոխությունը գերազանցում է 10 սմ-ը, աշխատանքային տարածքին ամենամոտ գտնվող ջրի մակարդակի չափիչ կայաններում դիտարկումները կատարվում են ժամ առ ժամ:

188. Ակնթարթային կամ մեկօրյա մակարդակի կապը պետք է կատարվեն՝

եղ ափի երկայնքով՝ մեկ ափից մյուսը անցումներով, հոսքի դինամիկ առանցքի անցման տեղերում,

ինչև 800 մ լայնությամբ գետերի վրա,

ետի երկու ափերի երկայնքով,

մ-ից ավելի լայնությամբ գետերի վրա:

Ջրի մակարդակի նիշերը պետք է որոշվեն՝

ակարդակի չափիչ կայանների և հենանիշերի հատվածներում,
րթափների վրա (на перекатах)՝ առնվազն երեք կետերում (վերևից մոտենալիս, գագաթին և ստորին մասում),

րային հատվածներում՝ առնվազն յուրաքանչյուր 5 կմ-ը մեկ,
ոսքի դինամիկ առանցքի մեկ ափից մյուսն անցումներում,
ղզիների և մեծ միջին հոսանքային տարածքների ակունքներում և
վերջնամասերում,

տակների գետաբերաններում,

ղբյուրների ճյուղերում և գետաբերաններում,

ամուրջների, ամբարտակների, կիսամբարտակների, ջուրը սահմանափակող և
հոսքը ուղղորդող կառույցների վերևում և ներքևում:

Ջրի հունը մի քանի ճյուղերի բաժանվելիս ջրի մակարդակների հոսքը պետք է միացվեն գլխավոր (նավարկելի) ճյուղի երկայնքով: Մյուս ճյուղերում մակարդակները պետք է միացվեն միայն իրենց սկզբնաղբյուրների և գետաբերանների մոտ:

Գետի կարճ հատվածներում և փոփոխական հետհոսքի և ջրի մակարդակի կտրուկ օրական տատանումների պայմաններում պետք է կատարվի մակարդակների ակնթարթային միացում:

Գետերի երկար հատվածներում, երբ հնարավոր չէ ակնթարթային միացում կատարել, պետք է կատարվի մակարդակների մեկօրյա միացում: Մեկօրյա միացում կատարելու համար ամբողջ աշխատանքային տարածքը բաժանվում է մոտ 50 կմ երկարությամբ հատվածների, որտեղ աշխատանքները կատարվում են առանձին խմբերի կողմից նշանակված օրը:

Ջրի մակարդակի կապակցումը հենանիշերին կարող է իրականացվել 2-3 օրվա ընթացքում: Մակարդակի դիտարկումների համաձայն՝ բոլոր ջրի մակարդակները պետք է հասցվեն միևնույն ժամանակի ընթացքում:

Ջրի մակարդակների կապակցումը հենանիշերին պետք է իրականացվեն IV դասի նիվելիրացման կրկնակի ընթացքերով կամ տեխնիկական նիվելիրացմամբ՝ կախված ջրի մակարդակից: Մեկօրյա կապակցման ընթացքում մակարդակի չափման կայաններում դիտարկումները պետք է կատարվեն ժամ առ ժամ:

189. Նավարկության համար վտանգ ներկայացնող ստորջրյա խոչընդոտների հայտնաբերումն իրականացվում է հատակի տարածքի հանութագրման միջոցով՝ օգտագործելով բազմաճառագայթային էխոլոտեր և հիդրոգրաֆիական տրալինգ: Հիդրոգրաֆիական տրալինգը կարող է իրականացվել կոշտ տրալով, հիդրոակուստիկ մեթոդներով (բարձր հաճախականության արձագանքող սարքի, կողային սկանավորման սոնարի միջոցով), սուզվող կամ ռոբոտացված հետազննություններով և ծրագրում հիմնավորված այլ մեթոդներով:

190. Տրալով աշխատանքներ կատարելիս անհրաժեշտ է հատվածներում բոլոր դեպքերում որոշել աշխատանքային մակարևույթի նիշերը: Աշխատանքային հատվածում անընդհատ պետք է գործի մակարդակի չափիչ կայանը, որը կապակցված է պետական նիվելիրացման ցանցի հենանիշների հետ: Տրալային հալսերի պլանային դիրքը որոշվում է արբանյակային գեոդեզիական ընդունիչների կամ գեոդեզիական հիմնավորման հիմնակետերից գործիքային հատումների միջոցով:

191. Նավահանգստային ուղեգծերի և ծածկագծային հարթակների հետազննական աշխատանքները ներառում են.

եղանք են տեղափոխում և ամրացնում նավագնացության ընթացքի առանցքը և սահմանները, հարթակները ծածկագծի նշանները տեղակայելու համար, նտառահատման սահմանների նշում և ամրացում, ավագնացության ընթացքի առանցքի և ծածկագծի առանցքի երկայնքով պիկետների նիվելիրացման նշահարում, որին հաջորդում է երկայնական պրոֆիլի կազմումը, լղեգծի գոտու և ծածկագծի առանցքի նշանների հարթակի տեղագրական հանութագրում և ինժեներատեղագրական հատակագծի ստեղծում:

192. Ջրային հոսանքի (ջրամբարի) հատակի ռելիեֆի ինժեներատեղագրական հատակագծերի ամբողջականությունն ու ճշտությունը, ինչպես նաև ջրային հոսանքին (ջրամբարին) հարակից ցամաքային տարածքի իրադրությունը, ռելիեֆը և կոմունալ հաղորդակցուղիները ենթակա են դաշտային ստուգման և ստեղծված հատակագծերի ընդունման՝ համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 29.07.2022 թ. N 17-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 13.01-2022-ի պահանջների: Ներքին դաշտային ծավալների ստուգման և դրա իրականացման մեթոդների պահանջները հիմնավորվում են ինժեներագեոդեզիական հետազննության ծրագրում:

193. Ինժեներահիդրոգրաֆիական աշխատանքների արդյունքների վերաբերյալ տեխնիկական հաշվետվությունը, կախված առաջադրանքի պահանջներից և կատարված աշխատանքի տեսակներից, 26 կետից բացի, պետք է ներառի.

ունային հանույթների դեպքում - հիդրոգրաֆիական հատակագիծ, ավագնացության ուղեգծի և ծածկագծի նշանների համար հարթակի ինժեներական հետազննությունների դեպքում,

լղեգծի (և/կամ դրա տարբերակների) ինժեներատեղագրական հատակագիծ, անհատական նախագծի հատվածների հետազննության հատակագիծ, ուղեգծի երկայնական պրոֆիլը՝ տարբերակներով, ուղեգծի վերջնակետերին մոտենալու հատակագիծ, ուղեգծի լայնության և երկարության մասին տեղեկատվություն, ուղեգծի բնորոշ կետերի կապակցման ուրվագծերն իրադրության տարրերի հետ, ուրվագծերի և ծածկագծի առանցքի ամրացված նշանների (ծածկագծային նշանների ցանկ) որվագծեր և տեղեկագրերի ցանկ, շրջադարձի անկյունների, ուղիղ գծերի և կորերի ցանկեր (ուղիղ գծեր և անկյուններ),

տորջրյա խոչընդոտների փնտրման և հետազննական աշխատանքներ կատարելիս՝

փնտրման համար օգտագործվող սարքավորումների կամ տրալի տեսակի մասին տեղեկատվություն (ներառյալ դրա նախագծի ուրվագիծը), նտրման և հետազննման տեխնոլոգիայի նկարագրությունը: Աշխատանքային տարածքի աշխատանքային հատակագիծ (նշված հիմնակետերով, փնտրման ուղեգծերով կամ տրալային գծերով, հայտնաբերված ստորջրյա խոչընդոտների կամ տրալային խոչընդոտների կետերով), հայտնաբերված ստորջրյա խոչընդոտների ցանկ (աղյուսակ) կամ տրալային խոչընդոտների ցանկ: Բարդ ինժեներական հետազննություններ կատարելիս, ջրային ռեժիմի հիդրոլոգիական բնութագրերը որոշելու համար անհրաժեշտ ինժեներահիդրոգրաֆիական աշխատանքների առանձին տեսակներ, առաջադրանքի պահանջով կամ ծրագրում հիմնավորված դեպքերում, կարող են կատարվել ինժեներահիդրոգրոգրաֆիական հետազննությունների շրջանակներում:

5.6 Շենքերի և շինությունների շինարարության և վերակառուցման ընթացքում հատուկ գեոդեզիական և տեղագրական աշխատանքներ

194. Շենքերի և կառույցների շինարարության և վերակառուցման ընթացքում գեոդեզիական աշխատանքները կատարվում են ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 29.07.2022 թ. N 17-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 13.01-2022-ի, ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N78-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 21-01-2014-ի, ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 24-ի N 87-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 20-06-2014-ի, ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 31-ի N 93-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-01-2014-ի, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 28.12.2020թ. N 102-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 20.04-2020-ի պահանջներով:
195. Շենքերի և կառույցների շինարարության և վերակառուցման ընթացքում հատուկ գեոդեզիական և տեղագրական աշխատանքները ներառում են՝
ինարարության համար գեոդեզիական նշահարման հիմքի ստեղծում,
ենքերի և կառույցների հիմնական կամ գլխավոր առանցքների բնության մեջ տեղափոխում,
ինարարության ընթացքում գեոդեզիական նշահարման աշխատանքներ,

ենքերի և կառույցների երկրաչափական պարամետրերի ճշտության գեոդեզիական ստուգումներ շինարարության և վերակառուցման ընթացքում,

ենքերի (կառուցվածքների) կառուցվածքային տարրերի և մասերի, ինչպես նաև կոմունալ գծերի պլանային և բարձունքային դիրքի կատարողական գեոդեզիական հանույթներ, վարտված շենքերի, կառույցների և կոմունալ գծերի ստուգողական գեոդեզիական հանույթներ,

ինարարության (վերակառուցման) երկրաբանական մոնիթորինգի ընթացքում կառուցվող շենքերի և կառույցների կառուցվածքների, դրանց հիմքերի, շրջակա տեխնոգեն դեֆորմացիաների դիտարկումներ,

ենքերի, կառույցների, տեխնոլոգիական տեղակայանքների, ճարտարապետական ձևերի տարրերի երկրաչափական չափերը որոշելու չափման և հանութագրման աշխատանքներ, երակառուցման ընթացքում բացված ստորգետնյա կոմունալ գծերի և կառույցների տեղերի որոշման գեոդեզիական աշխատանքներ,

ատարողական գեոդեզիական փաստաթղթերի պատրաստում,

նյութերի գրասենյակային մշակում և տեխնիկական հաշվետվության կազմում:

196. Շինարարության (վերակառուցման) գեոդեզիական նշահարման հիմքը ստեղծվում է հատուկ նշանակության գեոդեզիական ցանցի տեսքով, որի հիմնակետերից կառուցվող կապիտալ շինարարության նախագծերի նախագծային դիրքը տեղափոխվում է տեղանք, ստեղծվում է կառուցվող (վերակառուցվող) օբյեկտի ներքին նշահարման ցանց, կառուցվող (վերակառուցվող) շենքերի (կառույցների) և շրջակա կառուցված օբյեկտների դեֆորմացիաները: Գեոդեզիական նշահարման հիմքը ստեղծվում է՝ հաշվի առնելով կապիտալ շինարարության նախագծի շինարարության (վերակառուցման) ողջ ժամանակահատվածում դրա հիմնակետերի (կամ կետերի մի մասի, եթե դա նախատեսված է գեոդեզիական աշխատանքների նախագծման պլանով) անվտանգությունն ու կայունությունն ապահովելու անհրաժեշտությունը:

197. Պլանային գեոդեզիական նշահարման հիմքը մշակվում է հետևյալ ձևերով՝

արձր ճշտության արբանյակային գեոդեզիական ցանց,

ից մինչև 200 մ կողմերով շինարարական ցանց,

ռանկյունավորման (միկրոեռանկյունավորման), տրիլատերացիայի

ծային-անկյունային ցանց,

արմիր գծեր, շենքերի և կառույցների հիմնական կամ գլխավոր առանցքների նշահարում:

198. Բարձունքային գեոդեզիական նշահարման հիմքը ստեղծվում է նիվելիրացման ընթացքների և պոլիգոնների տեսքով, որոնք հենվում են պետական նիվելիրացման ցանցի կամ ՀԳՑ (GSSN) առնվազն երկու հենանիշերի վրա: Բարձունքային և պլանային ՀԳՑ հիմնակետերը սովորաբար համակցվում են:

199. Պլանային և բարձունքային գեոդեզիական նշահարման հիմքի նախագիծը մշակվում է որպես գեոդեզիական աշխատանքների կատարման նախագծի մաս: Նախագիծը պետք է պարունակի.

եոդեզիական հիմնակետերի տեղակայման սխեման,

ենքի կամ կառույցի գեոդեզիական նշահարման գծագրեր,

լային հիմնակետերի կոորդինատների և բարձունքային նիշերի կատալոգներ,

ախագծային կոորդինատների և բարձունքային նիշերի կատալոգներ,

եոդեզիական նշանների գծագրեր,

ԳՑ հիմքի ստեղծման ճշտությունը հիմնավորող բացատրագիր:

200. Գեոդեզիական նշահարման հիմքը ստեղծվում է ազգային, պետական կոորդինատային համակարգերում և Բալթյան 1977 բարձունքային համակարգում: Տեղամասի օբյեկտներում ՀԳՑ հիմնակետերի համար լրացուցիչ կազմվում է շինարարական ցանցի կոորդինատային համակարգում կոորդինատների կատալոգ (ցուցակ) (եթե օգտագործվում է նշված կոորդինատային համակարգը):

201. ՀԳՑ-ի կառուցման և գեոդեզիական նշահարման աշխատանքների կատարման ճշտությունն ընդունվում է համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 29.07.2022 թ. N 17-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 13.01-2022-ի պահանջների, իսկ շինարարության հատուկ տեսակների համար (հիդրոտեխնիկական, էներգետիկական, տրանսպորտային և այլն)՝ համապատասխան կարգավորող փաստաթղթերի պահանջներով:

202. Շենքերի և շինությունների կառուցվածքային տարրերի և մասերի կառուցման փուլում գտնվող գեոդեզիական հանույթը պետք է իրականացվի ԳՕՍՏ Ռ 51872-ի համաձայն՝ դրանց վերջնական տեղադրումից և ամրացումից հետո՝ համաձայն նախագծային փաստաթղթերի: Կառուցվածքային հանութագրման ենթակա շենքերի և շինությունների

կառուցվածքային տարրերի և մասերի ցանկը սահմանում է նախագծային փաստաթղթերի մշակողը: Ստորգետնյա ենթակառուցվածքային ծառայությունների և կառույցների կառուցման փուլում գտնվող հանութագրումը պետք է իրականացվի բաց խրամատներում և փոսորակներում՝ դրանց հետլիցքից առաջ:

203. Ստորգետնյա ենթակառուցվածքային գծերի և կառույցների կառուցման փուլում կատարողական հանույթ կատարելիս պետք է հետազոտվեն հետևյալը՝ խտահորերի, հորերի և խցիկների կենտրոնները, որերից և խցիկներից դուրս տեղակայված ծածկոցներ, արտակարգ երկարացումներ, անջատման և կառավարման փականները, իջադիրների բեկման անկյունները, կորերի հիմնական կետեր (սկիզբ, մեջտղ և վերջ), կոտրվածքների և ծռումների կետեր, ուղիղ հատվածների լայնական հատման կետեր, ենակները, անշարժ հենարանները, փոխհատուցիչները, պատյանների ծայրերում գտնվող սահմանային կետերը (պաշտպանիչ պատյաններ կամ ֆոկերներ), լիսավոր ստորգետնյա միջադիրի առանցքի հատման կետերը միացման և ճյուղավորման առանցքների հետ, ինարարության ընթացքում չբացահայտված հետազոտվող միջադիրին հատող կամ զուգահեռ անցնող գործող ստորգետնյա ենթակառուցվածքային ծառայությունների առանցքները, ողպատե խողովակաշարերի եռակցված միացումները և ոչ մետաղական խողովակաշարերի միացումները, ալուխային միջադիրների վրա միացումների կենտրոնները: Ստորգետնյա հաղորդակցությունների (կառուցվածքների) բնորոշ կետերի հանութագրում կատարելիս կատարվում են ընդհանուր չափումներ և որոշված կետերի միջև հեռավորությունների ստուգողական չափումներ:

204. Կատարողական հանույթի նյութերի հիման վրա թվային և գրաֆիկական տեսքով կազմվում են հետևյալ գեոդեզիական կատարողական փաստաթղթերը՝ ենքերի և շինությունների կառուցվածքային տարրերի և մասերի կատարողական սխեմաներ, ստորգետնյա ենթակառուցվածքային ծառայությունների և կառույցների կատարողական գծագրեր,

ետնի վրա և վերգետնյա ենթակառուցվածքային ծառայությունների կատարողական գծագրեր:

205. Գեոդեզիական նշահարման հիմքի ստեղծման և շենքերի ու շինությունների առանցքները բնության մեջ տեղափոխելու աշխատանքների արդյունքների հիման վրա հաշվետվական փաստաթղթերի կազմում պետք է ներկայացվեն հետևյալը,
- ԳՑ հիմնակետերի տեղակայման սխեմա,
- շահարման գծագրեր կապակցված շենքերի և շինությունների առանցքները նշահարման հիմնակետերին,
- ԳՑ հիմնակետերի գծագրեր,
- ԳՑ հիմնակետերի կոորդինատների և բարձրությունների կատալոգներ,
- ԳՑ հիմնակետերի տեղակայման ուրվագծեր և լուսանկարներ,
- ԳՑ հիմնակետերը պահպանության և անվտանգության հանձնման ակտ,
- ԳՑ հիմնակետերի պլանային և բարձունքային դիրքի դաշտային ստուգումների ակտ, ենքերի և կառույցների առանցքները բնության մեջ տեղափոխելու մասին ակտ,
- ԳՑ-ի ստեղծման վերաբերյալ բացատրագիր:

5.7 Շենքերի և կառույցների դեֆորմացիաների և նստվածքների, երկրի մակերևույթի շարժումների և վտանգավոր բնական պրոցեսների գեոդեզիական դիտարկումներ

5.7.1 Շենքերի և կառույցների դեֆորմացիաների և նստվածքների գեոդեզիական դիտարկումներ:

206. Շենքերի և կառույցների դեֆորմացիաների և նստվածքների գեոդեզիական դիտարկումները կատարվում են՝
- եֆորմացիաների բացարձակ և հարաբերական արժեքները որոշելու և դրանք հաշվարկվածների հետ համեմատելու համար,
- ենքերի և կառույցների շինարարության (վերակառուցման) և շահագործման ընթացքում դեֆորմացիաների առաջացման պատճառները և վտանգի աստիճանը պարզելու համար,

ապիտալ շինարարության նախագծերում առաջացող դեֆորմացիաների դեմ պայքարի կամ դրանց հետևանքները վերացնելու համար ժամանակին միջոցներ ձեռնարկելու համար,

իմքերի և հիմանտակերի կայունության անհրաժեշտ բնութագրերը ստանալու համար, բունտների հաշվարկային ֆիզիկամեխանիկական բնութագրերը պարզաբանելու համար անհրաժեշտ տվյալներ ստանալու համար,

արբեր հիմքային գրունտների և շենքերի ու կառույցների տեսակների համար դեֆորմացիաների առավելագույն թույլատրելի արժեքների հաշվարկման և սահմանման մեթոդները պարզաբանելու համար:

207. Դեֆորմացիաների և նստվածքների գեոդեզիական դիտարկումների հիմնական նպատակն է որոշել շենքերի և կառույցների հորիզոնական տեղաշարժերի (տեղադիրքերի), ուղղաձիգ տեղաշարժերի (նստվածքներ, նստեցումներ, բարձրացումներ) և կողաթեքումների արժեքները:

208. Դեֆորմացիաների և նստվածքների գեոդեզիական դիտարկումները կատարվում են որպես երկրաբանական մոնիթորինգի մաս՝ շինարարության (վերակառուցման) ողջ ժամանակահատվածում ու շենքերի և կառույցների շահագործման սկզբնական ժամանակահատվածում մինչև դեֆորմացիոն գործընթացների կայունացումը, բայց շինարարության ավարտից ոչ պակաս, քան մեկ տարի անց: Դեֆորմացիաների և նստվածքների կայունացման չափանիշները սահմանվում են առաջադրանքում՝ համաձայն կապիտալ շինարարության նախագծի նախագծային փաստաթղթերի:

209. 2-րդ և 3-րդ երկրաբանական կատեգորիաների օբյեկտների շինարարության, վերակառուցման և շահագործման ընթացքում դեֆորմացիաների և նստվածքների դիտարկումներն իրականացվում են.

ենքերի հիմքեր, հիմնատակեր և կառուցվածքներ,

ոսորակների պարփակող կառուցվածքներ,

առուցապատված տարածքում գտնվող շենքի ստորգետնյա մասը շրջապատող գրունտային զանգված,

րջակա զարգացման կառույցներ (ներառյալ ստորգետնյա ենթակառուցվածքային գծերը և կառույցները), երբ դրանք գտնվում են շինարարության կամ վերակառուցման

ազդեցության գոտում (ներառյալ ստորգետնյա ենթակառուցվածքային գծերի անցկացումը):

210. Երկրատեխնիկական 1-ին կատեգորիայի շենքերի և կառույցների դեֆորմացիաների և նստվածքների գեոդեզիական դիտարկումները պետք է կատարվեն առաջադրանքի լրացուցիչ պահանջի համաձայն:

211. Բացի 11 կետից, շենքերի և կառույցների դեֆորմացիաների դիտարկումների ընթացքում ինժեներագեոդեզիական հետազննություններ կատարելու առաջադրանքը պետք է պարունակի.

վյալներ շենքերի և կառույցների նպատակի և տեսակների, դրանց նախագծային առանձնահատկությունների բնութագրերի, հիմնական պարամետրերի (ներառյալ ստորգետնյա մասերի) վերաբերյալ,

եղեկատվություն հիմքերի տեսակների, չափերի և խորությունների վերաբերյալ,

եֆորմացիաների և նստվածքների հաշվարկված և սահմանային արժեքների, դրանց կայունացման չափանիշների վերաբերյալ,

իմքերի ինժեներակրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների վերաբերյալ,

եղեկատվություն դեֆորմացիաների չափման նախկինում կատարված աշխատանքների վերաբերյալ,

յն կառույցների ցանկը, որոնց համար պետք է կազմակերպվեն դիտարկումներ,

ափումների հաճախականությունը և ժամկետները,

երահսկվող պարամետրերը և դրանց որոշման պահանջվող ճշտությունը:

212. Շենքերի և կառույցների դեֆորմացիաների և նստվածքների դիտարկումների ժամանակ գեոդեզիական աշխատանքներ կատարելու առաջադրանքին պետք է կցվեն հետևյալ գրաֆիկական նյութերը՝

նժեներերկրաբանական կտրվածքներ,

իմքերի հատակագծեր, որոնց վրա նշված են դեֆորմացիաների որոշման դրոշմանիշերի տեղակայման տեղերը,

ենքերի կամ կառույցների կտրվածներ (երկայնական, լայնակի)՝ առանցքային կտրվածքներով և բարձունքային նիշերով,

ենքերի, կառույցների, կոմունալ ծառայությունների օբյեկտի տարածքում տեղակայման

հատակագիծ (ինժեներատեղագրական, իրադրության, քաղաքաշինական հատակագիծ, գլխավոր հատակագիծ):

213. Շենքերի և կառույցների դեֆորմացիաների և նստվածքների դիտարկումների ընթացքում ինժեներագեոդեզիական հետազննությունների ծրագիրը, բացի 12 կետից, պետք է պարունակի.

ենքերի և կառույցների հիմքերի բնութագրերը, դրանց նախագծային առանձնահատկությունները,

իմքերի ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները,

եֆորմացիաների և նստվածքների գնահատված և սահմանային արժեքները, դրանց կայունացման չափանիշները,

եֆորմացիաների չափագրման աշխատանքների ծավալը, ժամկետները, դիտարկումների հաճախականությունը և կատարման մեթոդները,

ենքերի կամ կառույցների այն մասերը, որոնք պետք է դիտարկվեն,

ինարարական աշխատանքների փուլերը,

ինարարության առկա գեոդեզիական հիմքի վերաբերյալ տեղեկատվություն,

եֆորմացիաների չափման նախկինում կատարված աշխատանքների արդյունքների (եթե այդպիսիք կան) վերլուծություն,

լային և դեֆորմացիոն գեոդեզիական հիմնակետերի (դրոշմանիշերի) տեղակայման նկարագրությունը, գեոդեզիական նշանների տեսակի ընտրության հիմնավորումը,

եֆորմացիոն չափումների սպասվող ճշտության նախնական հաշվարկը,

չափումների արդյունքների գրասենյակային մշակման կարգը:

214. Աշխատանքային ծրագրի գրաֆիկական հավելվածները պետք է ներառեն.

անցի ամենաթույլ կետում կետի պլանային և/կամ ուղղաձիգ դիրքի որոշման սպասվող ճշտության նախնական հաշվարկի հիման վրա մշակված հատուկ նշանակության գեոդեզիական ցանցի սխեման,

իմքերի և այլ կառույցների գծագրեր, որոնց դեֆորմացիաները պետք է դիտարկվեն,

իմնային, աշխատանքային և դեֆորմացիոն հիմնակետերի գծագրեր:

215. Շենքերի և կառույցների դեֆորմացիաների և նստվածքների գեոդեզիական դիտարկումների շրջանակներում պետք է կատարվեն հետևյալ տեսակի աշխատանքներ.

գեոդեզիական մոնիթորինգի ծրագրի հիման վրա գեոդեզիական աշխատանքներ կատարելու ծրագրի մշակում,
լողաձիգ և հորիզոնական հիմքերի հիմնակետերի տեղակայման և տեղադրման կառուցվածքի ընտրություն,
եղադրված գեոդեզիական հիմնակետերի պլանային և բարձունքային կապակցման իրականացում,
ենքերի և կառույցների վրա առաջադրանքով և ծրագրով նախատեսված կառավարման և գործիքային սարքավորումների տեղադրում (ավտոմատ տվիչներ), դեֆորմացիայի դրոշմանիշեր, մայակներ, ճեղքային չափիչներ և այլն),
լողաձիգ, հորիզոնական և կողաթեքումների տեղաշարժերի գործիքային չափումներ, ասիման և դիտարկման արդյունքների մշակում, ճշտության գնահատում և վերլուծություն, առաջադրանքին համապատասխան՝ դիտարկման փուլերի վերաբերյալ միջանկյալ հաշվետվությունների և կատարված աշխատանքի վերաբերյալ վերջնական

216. Շենքերի և կառույցների դեֆորմացիաների և նստվածքների գեոդեզիական դիտարկումները կատարվում են համաձայն «Ստան-դարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ- ի 04.03.2022 թ. № 33-Ն հրամանով հաստատված ԳՕՍՏ 24846-19-ի և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 29.07.2022 թ. N 17-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 13.01-2022-ի, 5.1 - 5.3 բաժինների պահանջներին համապատասխան: Գեոդեզիական չափումների մեթոդաբանությունը, անհրաժեշտության դեպքում, ճշտվում է ավարտված դիտարկումների փուլերի նյութերի հիման վրա՝ սահմանված կարգով ծրագրում փոփոխություններ կատարելով:

217. Շենքերի և կառույցների դեֆորմացիաների և նստվածքների գեոդեզիական դիտարկումների արդյունքների վերաբերյալ միջանկյալ հաշվետվությունը, կախված առաջադրանքի պահանջներից, պարունակում է.

